ԳԼՈՒԽ ԼԷ.

Արտաքսումն Լատինաց 'ի Սիոնէ։ Հիւրընկալութիւն Հայոց։ Արձանագրութիւն Սիոնի՝ և հին եկեղեցին։ Վեհ Հայոց ընդ Ցունաց։ Խաչատուր Եպիսկոպոս։ Համբարձման եկեղեցին։

ՅԱՂԱԳՍ վանաց Սիոնի, ուր բնակէին Լատին կղերք. բազում անգամ եղեւ յիշատակութիւն 'ի կարգի պատմութեանս՝ նշանակելով զերեւելի անցս նոցին։ Իսկ ըզվերջին դիպուածս, որ պատահեցաւ 'ի սմին յայսմիկ ժամանակի, զանազան եղանակաւ պատմեն գրիչք, զորոց բանս դիցուք աստանօր. նախ նա ինքն Մարինոս Լատին 'ի պատմութեան Ս. Երկրին ասէ՝ Սիւլէյման արքայ Օսմանցւոց եւ պարսպել զքաղաքն Երուսաղէմ, և վանքն Սիոնի մնաց արտաքոյ նորին. և Արաբացիք սկսան չարչարել և նեղել զլատին կրօնաւորս սակս ընչից, իսկ մեծաւոր նոցին յեցեալ 'ի խատութիւնս և 'ի յամառութիւնս իւր, ոչ կամեցաւ տալ զդումար դրամոցն զոր պահանջէին, և առիթ եղեւ կորստեան վանաց, որպէս պատահեցաւ եպիսկոպոսի մերոյ Ասորւոյ. զի ոչ յանձն առ տալ զ400 դահեկանս. ինքն սպանաւ և վանքն փոխեցաւ 'ի մզկիթ։ Ասի զայրացեալ գլխաւոր Շէյխք նոցին առին հրաման արքունուստ և արտաքսեցին զլատինս 'ի տեղւոջէ յայնմանէ, և գրաւեալ զվանքն անուանեցին Նէպի Տաւուտ 'ի շնորհս գերեզմանի Մարգարէին Դաւթի։ Իսկ կրօնաւորքն երկուցեալ 'ի ցասմանէ Արաբացւոց՝ փախուցեալ մտին 'ի քաղաքն. և յետ ժամանակաց առին 'ի Ցունաց զփոքր վանս Վրաց, և ընդարձակեալ զայն բնակեցան անդ. և անուանեցին Ս. Փրկիչ, և Արաբացիք կոչեն զնա Տէր էլ Ամոդ, այսինքն վանք սեան. (1561)։

Սակայն արժան է գիտել թէ՝ հաւատարիմ Լատին պատմիչն յորմէ՞ հոգւոյ շարժեալ թողու ընդ քօղով մոռացութեան զբարեսէր հիւրընկալութիւնս կրօնաւորացն Հայոց, և չառնէ երբէք յիշատակութիւն զայնմ խնդրոյ, որոյ վասն դեսպանք և երեւելիք և նոյն իսկ կղերականք նոցին, 'ի նմին ժամանակի սրք գտան 'ի Կոստանդինուպոլիս, ո՞րպէս